01/10.1/3810-09
2009-06-11

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

պարոն ՀՈՎԻԿ
ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Աբրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Արա Բաբլոյանի, Արևիկ Պետրոսյանի, Մկրտիչ Մինասյանի, Արմեն Մարտիրոսյանի, Ռուբիկ Հարությունյանի և Կարեն Ավագյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Հոգեբուժական օգնության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի վերաբերյալ։

«Հոգեբուժական օգնության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ՝

1. 1-ին հոդվածով փոփոխվող 3-րդ հոդվածի՝

1) 3-րդ կետն առաջարկում ենք շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3) հոգեկան խանգարում՝ հիվանդությունների միջազգային 10-րդ վերանայված դասակարգչի հոգեկան և վարքի խանգարումների դասին համապատասխանող հոգեկան անառողջ վիճակ կամ վարքի խանգարում».

2) 4-րդ կետում «հոգեկան հիվանդության» բառերը փոխարինել «հոգեկան խանգարման» բառերով՝ հաշվի առնելով նույն հոդվածի 3-րդ ենթակետի սահմանումը: Միաժամանակ, նկատի ունենալով, որ օրենքի նախագծով սահմանվում է «հոգեկան խանգարում» հասկացությունը, որպես հոգեկան և վարքի խանգարումների հիվանդությունների ընդհանուր անվանում, նախագծի հետագա տեքստում «հոգեկան հիվանդություն» բառերը փոխարինել «հոգեկան խանգարում» բառերով.

3) 5-րդ, 6-րդ և 7-րդ կետերում հոգեբուժական օգնության ձևերի հասկացությունները սահմանելիս՝ հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 10-րդ մասը, դրանց փուլերն անհրաժեշտ է տարանջատել «կամ» շաղկապով, (օրինակ, հետազոտում կամ ախտորոշում կամ բուժում և այլն) նկատի ունենալով, որ հոգեբուժական օգնությունը և դրա հիվանդանոցային ու արտահիվանդանոցային ձևերը կարող են իրականացվել ոչ միայն գործողությունների սահմանված ամբողջ շղթայով, այլև դրա մեկ կամ մի քանի օղակների իրականացմամբ.

4) 5-րդ կետը «հետազոտում» բառից առաջ լրացնել «բժշկական խորհրդատվություն» բառերով՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ նախագծի 2-րդ հոդվածում արտահիվանդանոցային և դիսպանսերային բուժօգնության վերաբերյալ դրույթում կիրառվում է «խոր-

հրդատվություն» հասկացությունը։ Առաջարկը բխում է նաև «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի պահանջներից, համաձայն որի բժշկական օգնություն և սպասարկում են համարվում նաև ոչ բուժական բնույթի ծառայությունները.

5) 11-րդ կետում նշված «ընդհանուր տիպի հիվանդանոց» հասկացությունն օրենսդրությամբ սահմանված չէ.

6) 13-րդ կետը «կրթություն» բառից հետո լրացնել «և որակավորում» բառով՝ հիմք ընդունելով «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածը։

2. 2-րդ հոդվածով փոփոխվող 9-րդ հոդվածի՝

1) 1-ին և 2-րդ մասերն անհրաժեշտ է համապատասխանեցնել 1-ին հոդվածով լրացվող 3-րդ հոդվածի 7-րդ և 8-րդ կետերին.

2) 1-ին մասը «խորհրդատվություն» բառից առաջ լրացնել «բժշկական» բառով։

3. Նախագծի ամբողջ տեքստում «փորձաքննություն» բառերը փոխարինել «հոգեբուժական փորձաքննություն» բառերով՝ նկատի ունենալով Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի դեկտեմբերի 9-ի N 1686-Ն որոշումը։

«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ սկզբունքային դիտողություններ և առաջարկություններ չունենք։

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ներկայացված օրենքների նախագծերի փաթեթն ընդունելի կհամարի միայն իր կողմից ներկայացված առաջարկությունների ընդունման դեպքում։

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքների նախագծերի փաթեթը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ

հանդես կգա Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի տեղակալ Ալեքսանդր Ղուկասյանը։

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Նախագիծ
Պ-613-06.05.2009-ԱՌ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«Հոգեբուժական օգնության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին

***Հոդված** 1.* «Հոգեբուժական օգնության մասին» Հայաստանի Հանրապետության 2004 թվականի մայիսի 25-ի, ՀՕ-80 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ՝

«*Հոդված 3. Օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները*

Սույն օրենքում օգտագործվող հիմնական հասկացություններն ունեն հետեւյալ իմաստները.

1) *հոգեկան առողջություն* ՝ մարդու անօտարելի եւ անփոխանցելի ոչ նյութական բարիք, որը ներառում է շրջակա միջավայրի համապատասխան ընկալումը, որոշումներ կայացնելու ու իրագործելու ունակությունը, կայուն հուզականության դրսեւորումը եւ պահպանումը.

2) *հոգեկան առողջության պահպանում* ՝ մարդու հոգեկան առողջության ոլորտում հոգեկան խանգարումների կանխարգելում եւ այդ նպատակով համապատասխան աշխատանքների կազմակերպում ու իրականացում.

3) *հոգեկան խանգարում* ՝ հոգեկան եւ վարքի խանգարումների գործող հիվանդությունների 10-րդ միջազգային դասակարգմանը համապատասխանող անառողջ վիճակ կամ վարքի խանգարում.

4) *հոգեկան խանգարումով տառապող անձ* ՝ հոգեկան հիվանդության հետեւանքով հոգեբուժական օգնություն ստացող կամ այդ օգնության կարիքն ունեցող անձ.

5) *հոգեբուժական օգնություն* ՝ հիվանդանոցային կամ արտահիվանդանոցային ձեւերով հոգեկան խանգարումով տառապող անձի հոգեկան հիվանդության հետազոտում, ախտորոշում, բուժում, խնամք ու սոցիալական վերականգնում եւ փորձաքննություն.

6) *հիվանդանոցային հոգեբուժական օգնություն* ՝ հոգեկան խանգարումով տառապող անձի հոգեկան հիվանդության հետազոտում, ախտորոշում, բուժում, եւ փորձաքննություն որն կազմակերպվում է այն դեպքերում, երբ նրան անհրաժեշտ է անմիջական տեւական հսկողություն եւ խնամք հիվանդանոցային պայմաններում.

7) *արտահիվանդանոցային հոգեբուժական օգնություն* ՝ հոգեկան հիվանդների հայտնաբերում, հաշվառում, շարունակական հսկողություն, փորձաքննություն, բուժում եւ սոցիալական վերականգնում արտահիվանդանոցային պայմաններում.

8) *դիսպանսերային հոգեբուժական օգնություն* ՝ քրոնիկ հոգեկան խանգարումներով տառապող անձանց նկատմամբ արտահիվանդանոցային ձեւով տեւական հսկողության եւ բուժման իրականացում.

9) *հոգեբուժական կազմակերպություն* ՝ «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով լիցենզավորված բժշկական հաստատություն, որի հիմնական խնդիրն է հոգեբուժական եւ հոգեթերապեւտիկ օգնության ու ծառայությունների իրականացումը.

10) *հոգեբուժական հիվանդանոց* ՝ «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով լիցենզավորված բժշկական հաստատություն, որի հիմնական խնդիրն է շուրջօրյա հոգեբուժական եւ հոգեթերապեւտիկ օգնության ու ծառայությունների հիվանդանոցային ձեւով իրականացումը.

11) *ընդհանուր հսկողության հոգեբուժական բաժանմունք* ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով ընդհանուր տիպի հիվանդանոցի, հոգեբուժական հիվանդանոցի կամ այլ հոգեբուժական կազմակերպության կազմում գտնվող բաժանմունք, որի հիմնական խնդիրն է հոգեբուժական եւ հոգեթերապեւտիկ օգնության ու ծառայությունների հիվանդանոցային ձեւով իրականացումը.

12) *հատուկ տիպի հոգեբուժական բաժանմունք* ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով հոգեբուժական հիվանդանոցի կազմում գտնվող բաժանմունք, որտեղ դատարանի որոշմամբ հարկադիր բուժման նպատակով գտնվում է այն անձը, ով իր հոգեկան վիճակով խիստ վտանգ է ներկայացնում իր եւ այլ անձանց համար եւ պահանջում է մշտական հսկողություն եւ բուժում.

13) *հոգեբույժ* ՝ բարձրագույն բժշկական կրթություն ստացած եւ Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով հոգեբուժական օգնություն իրականացնող ֆիզիկական անձ.

14) *բժշկական (կլինիկական) հոգեբան* ՝ բարձրագույն հոգեբանական կրթություն ստացած եւ հոգեկան առողջության ոլորտում հետդիպլոմային կրթություն ստացած բժշկահոգեբանական ծառայություններ իրականացնող ֆիզիկական անձ.

15) *հոսպիտալացում* ՝ հոգեկան խանգարումով տառապող անձի՝ հոժարակամ եւ ոչ հոժարակամ (հարկադիր) ձեւերով ընդունում հոգեբուժական հաստատություն.

16) *հոգեբուժական հանձնաժողով* ՝ 3 կամ ավելի հոգեբույժներից, անհրաժեշտության դեպքում՝ նաեւ նյարդաբանից կազմված մասնագետների խումբ (նրանցից մեկը հրավիրվում է այլ բժշկական հաստատությունից), որն ստեղծվում է հոգեբուժական կազմակերպության տնօրենի հրամանով եւ իրավասու է տալ անձի հոգեկան վիճակի ու դրանից բխող բոլոր բժշկական հարցերի վերաբերյալ մասնագիտական եզրակացություն։»։

***Հոդված** 2.* Օրենքի 9-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ՝

«*Հոդված 9. Արտահիվանդանոցային եւ դիսպանսերային հոգեբուժական օգնությունը*

1. Բժշկական ցուցումներից ելնելով՝ հոգեբուժական կազմակերպությունները հոգեկան խանգարումով տառապող անձի նկատմամբ արտահիվանդանոցային ձեւով իրականացնում են խորհրդատվություն, փորձաքննություն, ախտորոշում եւ բուժում՝ անձի կամ նրա օրինական ներկայացուցչի դիմելու դեպքում։

2. Տեւական (քրոնիկ) հոգեկան խանգարումներով տառապող անձի նկատմամբ իր կամ իր օրինական ներկայացուցչի դիմումի համաձայն իրականացվում է դիսպանսերային արտահիվանդանոցային հոգեբուժական օգնություն, որն ներառում է հաշվառում, շարունակական հսկողություն ու բուժում եւ սոցիալական վերականգնում ու փորձաքննություն։

3. Դիսպանսերային արտահիվանդանոցային հոգեբուժական օգնությունը իրականացնելու կամ դադարեցնելու մասին որոշումը կայացնում է հոգեբուժական օգնություն իրականացնող հաստատությունում ստեղծվող հոգեբուժական հանձնաժողովը, որի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով։»։

***Հոդված** 3.* Օրենքի 18-րդ հոդվածում «Հոգեբուժական ստացիոնար» բառերը փոխարինել «Ընդհանուր հսկողության հոգեբուժական բաժանմունք» բառերով։

***Հոդված** 4.* Օրենքի 19-րդ հոդվածում ավելացնել նոր 4-րդ մաս հետեւյալ բովանդակությամբ.

«4. Հոգեբուժական հետազոտումն կարող է իրականացվել առանց հետազոտվողի կամ նրա օրինական ներկայացուցչի համաձայնության միայն այն դեպքերում, երբ հետազոտվողը իր հոգեկան վիճակից ելնելով անկարող է հոգալ սեփական կենսական կարիքները ու արտահայտել իր ազատ կամքը եւ չունի օրինական ներկայացուցիչ։»։

***Հոդված** 5.* Օրենքի 21-րդ հոդվածի՝

ա) վերնագրում «Հոգեբուժական ստացիոնարից» բառերը փոխարինել «Ընդհանուր հսկողության հոգեբուժական բաժանմունքից» բառերով.

բ) 1-ին մասում «Հոգեբուժական ստացիոնարից» բառերը փոխարինել «Ընդհանուր հսկողության հոգեբուժական բաժանմունքից» բառերով.

գ) 2-րդ մասում «Հոգեբուժական ստացիոնարում» բառերը փոխարինել «Ընդհանուր հսկողության հոգեբուժական բաժանմունքում» բառերով։

Հոդված *6.* Օրենքի 22-րդ հոդվածի տեքստը շարադրել նոր խմբագրությամբ՝

«1. Հոգեկան խանգարումներով տառապող անձն առանց իր կամ օրինական ներկայացուցչի համաձայնության կարող է հոսպիտալացվել հոգեբուժական հիվանդանոց կամ այլ հոգեբուժական կազմակերպություն միայն օրենքով նախատեսված դեպքերում։

2. Ոչ հոժարակամ (հարկադիր) հոսպիտալացման եւ հոգեբուժական կազմակերպության ընդհանուր հսկողության կամ հատուկ տիպի հոգեբուժական բաժանմունքներում գտնվելու ընթացքում հոգեբույժի որոշմամբ հոգեկան խանգարմամբ տառապող անձի նկատմամբ կարող են կիրառվել ֆիզիկական զսպման (գոտիներ, հատուկ հագուստներ) ու մեկուսացման միջոցներ, հանդարտեցման բժշկական մեթոդներ, որոնց կիրառման եւ տեւողության մասին բժշկական փաստաթղթերում կատարվում է պատճառաբանված գրառում։»։

Հոդված *7.* Օրենքի 23-րդ հոդվածի՝

ա) վերնագիրը շարադրել նոր խմբագրությամբ՝

«*Հոդված 23. Հոգեբուժական կազմակերպությունում տեղավորված անձի հետազոտումը* ».

բ) տեքստում «Հոգեբուժական ստացիոնարում» բառերը փոխարինել «Հոգեբուժական կազ-մակերպության ընդհանուր հսկողության բաժանմունքում» բառերով։

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀՈԳԵԲՈՒԺԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Հոգեբուժական օգնության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխու-թյուններ եւ լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունման առաջարկությունը պայմանավորված է հոգեկան առողջության բնագավառի իրավական դաշտի բարելավման անհրաժեշտությամբ եւ հոգեկան առողջության ծառայությունների կազմակերպման ոլորտում առկա համակարգի օրենսդրական կարգավորման պահանջներով, ինչպես նաեւ հոգեկան հիվանդությամբ տառապող անձանց իրավունքների պաշտպանության ուղղությամբ կատարվող

աշխատանքների շարունակականության ապահովման միտումով: Մասնավորապես, սույն նախագիծը հստակեցնում է հոգեբուժական օգնության իրականացման հիվանդանոցային եւ արտահիվանդանոցային ձեւերը՝ վերանայելով մինչ օրս օրենսդրության ոլորտում կիարառվող, սակայն գործնական գործածությանը եւ նշանակությանը չհամապատասխանող մի շարք հասկացություններ: Այսպես, Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով հիվանդանոցային հարկադիր հոգեբուժական օգնությունը կարող է իրականացվել օրենքով սահմանված կարգով՝ ընդհանուր կամ հատուկ տիպի հոգեբուժական հիվանդանոցում: Ներկայիս հոգեկան առողջության ծառայությունների ոլորտում հիվանդանոցային ձեւով հոգեբուժական օգնությունը կարող է իրականացվել հոգեբուժական հիվանդանոցում, ընդհանուր տիպի հիվանդանոցի կամ հոգեբուժական կազմակերպության բազայում գործող ընդհանուր հսկողության հոգեբուժական բաժանմունքներում կամ նշված հաստատությունների բազայում գործող հատուկ տիպի հոգեբուժական բաժանմունքներում, որոնք հատուկ հսկողություն են ապահովում իրենց հոգեկան վիճակով խիստ վտանգ ներկայացնող անձանց նկատմամբ:

Հաշվի առնելով նշված հակասությունը սույն նախագծով առաջարկվում է հիմնական հասկացություններում կանոնակարգել հիվանդանոցային հոգեբուժական օգնություն, հոգեբուժական հիվանդանոց, ընդհանուր հսկողության հոգեբուժական բաժանմունք եւ հատուկ տիպի հոգեբուժական բաժանմունք հասկացությունները:

Ինչ վերաբերվում է դիսպանսերային հոգեբուժական օգնությանը, ապա ի տարբերություն գործող օրենքում այս հասկացության նույնացմանը արտահիվանդանոցային հոգեբուժական օգնության հետ, ներկայումս անհրաժեշտություն է առաջանում առանձնացնել այս երկու հասկացությունները: Սույն նախագծով հստակ սահմանվում է արտահիվանդանոցային հոգեբուժական օգնություն հասկացությունը եւ առանձնացվում է դիսպանսերային հոգեբուժական օգնություն հասկացությունը որպես արտահիվանդանոցային հոգեբուժական օգնության ձեւ:

Հիմնական հասկացություններում փոփոխությունները անհրաժեշտություն են առաջացնում նաեւ գործող օրենքի համապատասխան հոդվածներում օգտագործվող հասկացությունների փոփոխման եւ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածներում փոփոխությունների կատարման:

Բացի հասկացությունների մեջ առաջարկվող փոփոխությունների սույն նախագիծը նպտակ ունի հոգեկան հիվանդությամբ տառապող անձանց իրավունքների պաշտպանության ոլորտում բարեփոխումներ իրականացնելու: Նշված նպատակից ելնելով առաջարկվում է վերանայել հոգեբուժական հանձնաժողովի կազմավորումը, որն գործող օրենքով բաղկացած է 3 կամ ավելի հոգեբույժներից, անհրաժեշտության դեպքում՝ նաեւ նյարդաբանից, որոնցից մեկը հրավիրվում է այլ հոգեբուժական կազմակերպությունից: Հաշվի առնելով այն, որ մարզերում կարող է գործել միայն մեկ հոգեբուժական կազմակերպություն եւ օրենքով սահմանված կարգով եւ ժամանակահատվածում հնավար չէ հոգեբույժ կամ նյարդաբան հրավիրել այլ մարզի կամ Երեւանի հոգեբուժական կազմակերպությունից, միեւնույն ժամանակ մարզի այլ բժշկական հաստատությունը իր կազմում կարող է ունենալ համապատասխան մասնագետ, ապա սույն նախագծով առաջարկվում է թույլատրել հոգեբուժական հանձնաժողովի կազմում այլ բժշկական հաստատությունից համապատասխան մասնագետ ընդգրկելը: Այս փոփոխությունը կնպաստի հոգեկան հիվանդությամբ տառապող անձի իրավունքների պաշտպանությանը,

իր խնդրի անաչառ եւ օրենքով սահմանված ժամկետում լուծում տալու հնարավորության ընդլայնմանը։

Գործող օրենքի բացերից է նաեւ այն, որ կարգավորված չէ հոգեբուժական հետազոտման իրականացման կարգը առանց հետազոտվողի կամ նրա օրինական ներկայացուցչի համաձայնության։ Այս բացը կարող է բերել մարդու ազատ կամքի արտահայտման իրավունքի ոտնահարման։ Հաշվի առնելով այս հանգամանքը նախագծով առաջարկվում է հոգեբուժական հետազոտումն իրականացնել առանց հետազոտվողի կամ իր օրինական ներկայացուցչի համաձայնության այն դեպքում, երբ հետազոտվողը իր հոգեկան վիճակից ելնելով անկարող է հոգալ սեփական կենսական կարիքները ու արտահայտել իր ազատ կամքը եւ չունի օրինական ներկայացուցիչ։

Նախագիծ
Պ-613[1]-06.05.2009-ԱՌ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին

***Հոդված** 1.* Հայաստանի Հանրապետության 2003 թվականի ապրիլի 18-ի քրեական օրենսգրքի (այսուհետ՝օրենսգիրք) 97-րդ հոդվածի «հոգենյարդային հաստատություն» բառերը փոխարինել «հոգեբուժական կազմակերպություն» բառերով։

***Հոդված** 2.* Օրենսգրքի 98-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ եւ 3-րդ կետերը շարադրել նոր խմբագրությամբ՝

«1) հոգեբուժական կազմակերպությունների ընդհանուր հսկողության հոգեբուժական բաժանմունքում հարկադիր բուժումը.

2) հոգեբուժական հիվանդանոցի հատուկ տիպի հոգեբուժական բաժանմունքում հարկադիր բուժումը.»։

***Հոդված** 3.* Օրենսգրքի 100-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ՝

«*Հոդված 100. Հարկադիր բուժումը հոգեբուժական կազմակերպություններում*

1. Հոգեբուժական կազմակերպությունների ընդհանուր հսկողության հոգեբուժական բաժանմունքում դատարանի որոշմամբ հարկադիր բուժում կարող է նշանակվել, եթե անձի հոգեկան խանգարման վիճակը պահանջում է բուժման, խնամքի եւ հսկողության այնպիսի պայմաններ, որոնք կարող են իրականացվել միայն հիվանդանոցային ձեւով։

2. Հոգեբուժական հիվանդանոցի հատուկ տիպի հոգեբուժական բաժանմունքում դատարանի որոշմամբ հարկադիր բուժում կարող է նշանակվել այն անձի նկատմամբ, ով իր հոգեկան վիճակով խիստ վտանգ է ներկայացնում իր եւ այլ անձանց համար եւ պահանջում է մշտական հսկողություն։»։

***Հոդված** 4.* Օրենսգրքի 102-րդ հոդվածի տեքստում «հոգեբուժական հիվանդանոցում» բառերը փոխարինել «հոգեբուժական կազմակերպությունում» բառերով։

***Հոդված** 5.* Օրենսգրքի 103-րդ հոդվածի 2-րդ մասում «բժիշկ-հոգեբույժների հանձնաժողովի» բառերը փոխարինել «հոգեբուժական հանձնաժողովի» բառերով։

***Հոդված** 6.* Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից։

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունման առաջարկությունը պայմանավորված է բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների տեսակների արդիականացման պահանջով:

Ներկայիս հոգեկան առողջության ծառայությունների կազմակերպման համակարգում հարկադիր բուժումը կարող է իրականացվել հիվանդանոցային եւ արատահիվանդանոցային ձեւերով՝ մասնավորապես, հիվանդանոցային ձեւով հարկադիր հոգեբուժալամ օգնությունը օրենքով սահմանված կարգով իրականացվում է ընդհանուր հսկողության հոգեբուժական բաժանմունքներում կամ հատուկ տիպի հոգեբուժական բաժանմունքներում, մինչդեռ գործող օրենսգրքում օգտագործվում են «ընդհանուր կամ հատուկ տիպի հոգեբուժական հիվանդանոց» հասկացությունները: Սույն նախագծով առաջարկվում է գործող օրենսգրքի համապատասխան հոդվածներում կատարել նշված հասկացությունների օգտագործման հետ կապված փոփոխություններ՝ համաձայնեցնելով սույն փոփոխությունները «Հոգեբուժական օգնության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով առաջարկվող փոփոխությունների հետ:

Հեղինակներ՝ Արա Բաբլոյան, Արեւիկ Պետրոսյան, Մկրտիչ Մինասյան, Արմեն Մարտիրոսյան, Ռուբիկ Հարությունյան, Կարեն Ավագյան